

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

►B Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի մայիսի 6-ի 2009/40/ԵՀ հրահանգ

Մեխանիկական փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների շահագործման պիտանիության փորձարկումների վերաբերյալ

(վերամշակված)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

(ՊՏ L 141, 06.06.2009թ., էջ 12)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

Թիվ էջ ամսաթիվ

"M1	Հանձնաժողովի 2010 թվականի հուլիսի L 173 5-ի 2010/48/ԵՀ հրահանգ (Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)	47	08.07.2010թ.
-----	---	----	--------------

▼B

**Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի մայիսի 6-ի 2009/40 ԵՀ
հրահանգ**

**Մեխանիկական փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների շահագործման
պիտանիության փորձարկումների վերաբերյալ
(վերամշակված)**

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ,
մասնավորապես, դրա 71-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը (1),

խորհրդակցելով Տարածաշրջանների հարցերով կոմիտեի հետ,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն (2),

Քանի որ.

- 1) «Մեխանիկական փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների շահագործման
պիտանիության փորձարկումների վերաբերյալ՝ անդամ պետությունների օրենքները
համապատասխանեցնելու մասին» Խորհրդի 1996 թվականի դեկտեմբերի 20-ի
96/96/ԵՀ հրահանգը (3) բազմիցս ենթարկվել է էական փոփոխությունների (4), հաշվի
առնելով այն հանգամանքը, որ պահանջվում են լրացուցիչ փոփոխություններ,
հրահանգը պետք է վերամշակվի՝ տեքստում պարզություն մտցնելու նկատառումներով,
- 2) ելնելով ընդհանուր տրանսպորտային քաղաքականության մոտեցումներից՝ համայնքում
երթեւեկող որոշակի փոխադրամիջոցներ պետք է շահագործվեն առավելագույն
բարենպաստ հանգամանքների ներքո՝ անդամ պետությունների տարածքում

փոխադրողների նկատմամբ կիրառվող անվտանգության եւ մրցակցային պայմանների առումով,

- 3) ճանապարհային երթեւեկության մասշտաբների մեծացումը եւ դրանով պայմանավորված վտանգի աճն ու անհարմարությունները բոլոր անդամ պետությունների համար ստեղծել են ճանապարհային անվտանգության հետ կապված միեւնոյն բնույթի լուրջ խնդիրներ,
- 4) փոխադրամիջոցների երաշխիքային շահագործման ընթացքում իրականացվող փորձարկումը պետք է լինի հարաբերականորեն պարզ, արագ եւ ոչ ծախսատար,
- 5) հետեւաբար, սույն Հրահանգում թվարկված բաղադրիչների փորձարկման նպատակով կիրառվող Համայնքի նվազագույն չափանիշները եւ մեթոդները պետք է սահմանվեն առանձին հրահանգներում,
- 6) անհրաժեշտ է առանձին հրահանգներում սահմանված չափանիշները եւ մեթոդներն արագորեն համապատասխանեցնել տեխնիկական առաջընթացին եւ այս նպատակին ուղղված միջոցառումների իրականացմանը նպաստելու համար սահմանել «Մեխանիկական փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների շահագործման պիտանիության փորձարկումների մասին» հրահանգը տեխնիկական առաջընթացին համապատասխանեցնելու հարցերով զբաղվող կոմիտեի շրջանակում անդամ պետությունների եւ Հանձնաժողովի միջեւ սերտ համագործակցության ընթացակարգ,
- 7) ինչ վերաբերում է արգելակային համակարգերին, ապա դժվար է սահմանել կանոններ այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք օդի ճնշման կարգավորումները եւ ճնշման վերականգնման ժամանակահատվածն են՝ հաշվի առնելով Համայնքի տարածքում սարքավորումների եւ մեթոդների տարբերությունը,

- 8) փոխադրամիջոցների փորձարկման մեջ ներգրավված բոլոր կողմերն ընդունում են, որ փորձարկման մեթոդը եւ, մասնավորապես, փոխադրամիջոցի՝ բեռնված, մասնակիրներն բեռնված կամ բեռնաթափված վիճակում փորձարկվելը, կարող է ազդել փորձարկողների՝ արգելակային համակարգերի շահագործման պիտանիության հարցում ունեցած վստահության աստիճանի վրա,

- 9) տարատեսակ բեռնվածքով փոխադրամիջոցների յուրաքանչյուր մոդելի արգելակային հզորության բազային (հղումային) արժեքների սահմանման շնորհիվ հնարավոր կլինի վերականգնելու փորձարկողների նախկին վստահությունը, սույն Հրահանգով ընձեռնվում է փոխադրամիջոցների յուրաքանչյուր կատեգորիայի փորձարկման հնարավորություն սույն ռեժիմի ներքո՝ որպես աշխատունակության նվազագույն արժեքների ստուգման այլընտրանքային միջոց,

- 10) արգելակային համակարգերի առումով՝ սույն Հրահանգի գործողության ոլորտը պետք է գլխավորապես առնչվի «Մեխանիկական փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների որոշակի կատեգորիաների արգելակային սարքերի (5) վերաբերյալ» անդամ պետությունների օրենքները համապատասխանեցնելու մասին Խորհրդի 1971թ. հուլիսի 26–ի 71/320/ԵՏՀ հրահանգի համաձայն, բաղադրիչային տեսակի հաստատում անցած փոխադրամիջոցներին, թեեւ ընդունված փաստ է, որ այդ Հրահանգի պահանջները եւ ազգային ստանդարտները, համաձայն որոնց փոխադրամիջոցների որոշ տեսակներ ենթարկվել են նմանատիպ հաստատման, կարող են տարբերվել,

- 11) անդամ պետությունները կարող են ընդլայնել փորձարկման ենթակա արգելակային համակարգերի շրջանակը սույն Հրահանգով չկարգավորվող փոխադրամիջոցները կամ բաղադրիչները փորձարկելու նպատակով,

- 12) անդամ պետությունները կարող են առավել խստացնել կամ առավել մեծ հաճախականությամբ կազմակերպել արգելակային համակարգերի փորձարկումները,

- 13) սույն հրահանգով նախատեսվում է դեպի մթնոլորտ արտանետումների կանոնավոր ստուգումների միջոցով պահպանել արտանետումների ցածր մակարդակ՝ փոխադրամիջոցի երաշխիքային շահագործման ընթացքում եւ ապահովել հիմնական աղտոտող փոխադրամիջոցների շահագործման դադարեցում՝ մինչ վերջիններս կլինեն պատշաճ տեխնիկական վիճակում,
- 14) սխալ կարգավորումները եւ ոչ պատշաճ տեխնիկական վիճակը կարող են բացասաբար անդրադառնալ ոչ միայն շարժիչի, այլեւ շրջակա միջավայրի վրա՝ լինելով շրջակա միջավայրի աղտոտման ավելացման եւ վառելիքի զգալի սպառման պատճառ, շրջակա միջավայրի համար կարելու է բարենպաստ տրանսպորտի զարգացումը,
- 15) արտանետումների առումով, սեղմումային բոցավառմամբ աշխատող շարժիչների (դիզելային շարժիչ) դեպքում դեպի մթնոլորտ արտանետվող գազերի թափանցելիության հաշվարկումը համարվում է շարժիչի պատշաճ տեխնիկական վիճակի համարժեք ցուցիչ,
- 16) արտանետումների առումով, կայծով բռնկվող շարժիչների դեպքում (բենզինային շարժիչ) շարժիչի աշխատանքի թերացումների ժամանակ արտանետիչ խողովակից արձակվող ածխածնի մոնօքսիդի չափումը համարվում է փոխադրամիջոցի պատշաճ տեխնիկական վիճակի համարժեք ցուցիչ,
- 17) դեպի մթնոլորտ արտանետումների ստուգումների առումով կանոնավոր տեխնիկական զննում չանցած փոխադրամիջոցների անսարքության ցուցանիշը կարող է բավականին բարձր լինել,
- 18) արտանետումների կանոնավոր ստուգման նպատակով սահմանված չափանիշները, ի տարբերություն ավանդական փոխադրամիջոցների համար գործող նույն չափանիշների, պետք է բենզինային շարժիչով աշխատող փոխադրամիջոցների դեպքում առավել խիստ լինեն, որոնց համար տեսակի հաստատման չափանիշներով

սահմանված է արտանետումների վերահսկման այնպիսի առաջատար համակարգերով հագեցած լինելու մասին, ինչպիսիք թթվածնային ցուցիչով վերահսկվող եռակողմ կատալիտիկ փոխակերպիչներն են,

19) մեխանիկական փոխադրամիջոցներից արտանետումների պատճառով օդի աղտոտումը կանխելու վերաբերյալ միջոցառումներին առնչվող (6)՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի հոկտեմբերի 13-ի 98/69/ԵՀ Հրահանգով՝ 2000 թվականից սկսած, պահանջվում է բենզինային շարժիչով աշխատող ավտոմեքենաների եւ թեթեւ առետրային փոխադրամիջոցների մեջ տեղադրված դիագնոստիկ համակարգերի բնութագիր, որպեսզի աշխատանքային ռեժիմում իրականացվի փոխադրամիջոցի արտանետումների վերահսկման համակարգի կառավարում, այս նույն սկզբունքով, 2003 թվականից ի վեր, փոխադրամիջոցների մեջ տեղադրված դիագնոստիկ համակարգերը պարտադիր է նաեւ նոր դիզելային շարժիչով աշխատող փոխադրամիջոցների համար,

20) անդամ պետությունները, հարկ եղած դեպքում, կարող են սույն Հրահանգի գործողության շրջանակից բացառել պատմական արժեք ներկայացնող որոշ փոխադրամիջոցներ, նրանք նաեւ կարող են սահմանել փորձարկման սեփական չափանիշներ՝ նմանատիպ փոխադրամիջոցների համար, այնուհանդերձ, նմանատիպ իրավունքի դեպքում չպետք է կիրառվեն առավել խիստ չափանիշներ՝ փոխադրամիջոցների փորձարկման նպատակով ի սկզբանե մշակված չափանիշների համեմատությամբ,

21) առկա են ստուգման պարզ, ընդհանուր համակարգեր, որոնք կարող են կիրառվել փորձարկումն իրականացնող կազմակերպությունների կողմից՝ փոխադրամիջոցներում տեղադրված արագության սահմանափակիչների մեծ մասի փորձարկման նպատակով, փոխադրամիջոցներում նմանատիպ դիագնոստիկ սարքերի բացակայության դեպքում իրավասու մարմինների համար անհրաժեշտ կլինի կամ կիրառել արտադրող կազմակերպության համապատասխան սարքավորումը կամ վավերացնել համարժեք փորձարկման իրականացման հավաստագիրը՝ տրված արտադրող կազմակերպության

կամ լիազորված կազմակերպության կողմից,

- 22) արագության սահմանափակիչի սարքինության պարբերական ստուգման գործընթացը պետք է պարզեցված լինի այն փոխադրամիջոցների դեպքում, որտեղ բացակայում է ձայնագրման նոր սարքը (թվային պտուտաչափ)՝ համաձայն 1998 թվականի սեպտեմբերի 24-ի մեքենաներում ձայնագրման սարքերի տեղադրմանը վերաբերող՝ Խորհրդի թիվ 2135/98 (ԵՀ) կանոնակարգով փոփոխվող՝ թիվ 3821/85 (ԵՏՀ) կանոնակարգի, թիվ 3820/85 (ԵՏՀ) եւ թիվ 3821/85 կանոնակարգերի կիրառմանը վերաբերող՝ թիվ 88/599/ ԵՏՀ հրահանգի (7), 2003 թվականից ի վեր՝ նոր փոխադրամիջոցներում առկա են նմանատիպ սարքեր,
- 23) տաքսիների եւ շտապօգնության մեքենաների դեպքում գործում են անձնական օգտագործման փոխադրամիջոցների համար կիրառվող տեխնիկական պահանջները, հետեւաբար, փորձարկման ենթակա բաղադրիչները նույնն են, թեւ փորձարկումները կարող են իրականացվել տարբեր հաճախականությամբ,
- 24) յուրաքանչյուր անդամ պետություն պետք է սեփական իրավասության տարածքում ապահովի շահագործման պիտանիության փորձարկումների բարձր մակարդակ եւ սահմանված չափանիշներին համապատասխան իրականացում,
- 25) Հանձնաժողովը պետք է ստուգի սույն Հրահանգի գործնական կիրառումը,
- 26) քանի որ անդամ պետություններ, առանձին գործելով, չեն կարող իրականացնել առաջարկվող գործողության նպատակները, այն է՝ շահագործման պիտանիության փորձարկումների կանոնների ներդաշնակեցում, բեռնափոխադրումներ իրականացնող ընկերությունների միջեւ մրցակցության խաթարման կանխում եւ փոխադրամիջոցների պատշաճ ստուգման ու տեխնիկական սպասարկման երաշխավորում եւ, հետեւաբար, ելնելով առաջարկվող գործողության մասշտաբներից՝ այդ նպատակները կարող են ավելի լավ իրականացվել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է միջոցներ

ձեռնարկել՝ Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված լրացուցչության սկզբունքի համաձայն, այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Հրահանգով չի նախատեսվում ավելին, քան անհրաժեշտ է՝ նշված նպատակներն իրագործելու համար,

27) սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ ակտերը պետք է ընդունվեն «Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների կիրառման ընթացակարգերը սահմանելու մասին» Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշման համաձայն (8),

28) մասնավորապես, Հանձնաժողովը պետք է ունենա փորձարկման որոշակի նվազագույն չափանիշներ եւ մեթոդներ սահմանելու ու դրանք տեխնիկական առաջընթացին համապատասխանեցնելու իրավասություն, քանի որ այդ ակտերն ընդհանուր բնույթ են կրում եւ նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը նոր, ոչ էական տարրեր ավելացնելու միջոցով փոփոխելու համար, ապա դրանք պետք է ընդունվեն 1999/468/ԵՀ որոշման 5ա հոդվածով սահմանված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան,

29) սույն Հրահանգը չպետք է հակասի III հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգները ազգային իրավունքում փոխատեղելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

1. Տվյալ պետությունում գրանցված մեխանիկական փոխադրամիջոցները, դրանց կցորդները եւ կիսակցորդները պետք է ենթարկվեն շահագործման պիտանիության պարբերական փորձարկումների յուրաքանչյուր անդամ պետությունում՝ համաձայն սույն Հրահանգի:

2. I եւ II հավելվածներում շարադրված են փորձարկման ենթակա բաղադրիչները, մեխանիկական փոխադրամիջոցների կատեգորիաները եւ շահագործման պիտանիության փորձարկումների հաճախականությունը:

Հոդված 2

Սույն Հրահանգով նախատեսված շահագործման պիտանիության փորձարկումները պետք է իրականացվեն անդամ պետության կողմից, կամ պետության կողմից նմանատիպ առաջադրանքների իրագործման նպատակով վստահված պետական մարմնի կողմից, կամ պետության կողմից նշանակված եւ ուղղակիորեն վերահսկվող մարմինների կամ կառույցների կողմից՝ ներառյալ համապատասխան կարգով լիազորված մասնավոր մարմինները.

մասնավորապես, եթե փոխադրամիջոցների փորձարկման նպատակով գործող կառույցներն իրականացնում են նաեւ մեխանիկական փոխադրամիջոցների վերանորոգումներ, ապա անդամ պետությունները պետք է ջանք չխնայեն՝ փոխադրամիջոցի փորձարկման օբյեկտիվությունը եւ բարձր որակն ապահովելու համար.

Հոդված 3

1. Անդամ պետությունները, անհրաժեշտության դեպքում, ձեռնարկում են այնպիսի միջոցներ, որ հնարավոր կլինի ապացուցել՝ փոխադրամիջոցի՝ առնվազն սույն Հրահանգի դրույթներին չհակասող շահագործման պիտանիության փորձարկում անցնելու փաստը:

Նշված միջոցների մասին պետք է ծանուցվի մյուս անդամ պետություններին եւ Հանձնաժողովին:

2. Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է ճանաչի մեկ այլ անդամ պետության կողմից տրվող այն վկայականը, որով ապացուցվում է այդ նույն անդամ պետությունում գրանցված մեխանիկական փոխադրամիջոցի, վերջինիս կցորդի կամ կիսակցորդի առնվազն սույն Հրահանգի դրույթներին չհակասող շահագործման պիտանիության փորձարկում անցնելու փաստը՝ կիրառելով իր կողմից տրված վկայականի ճանաչման սկզբունքը:

3. Անդամ պետություններն իրականացնում են հնարավորինս համապատասխան գործընթացներ, որոնք կփաստեն իրենց տարածքում գրանցված փոխադրամիջոցների արգելակային համակարգերի աշխատունակության՝ սույն Հրահանգով սահմանված պահանջներին համապատասխանության հանգամանքը:

ԳԼՈՒԽ II

ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 4

1. Անդամ պետություններն իրավունք ունեն սույն Հրահանգի գործողության շրջանակից բացառելու զինված ուժերին, օրինապահ մարմիններին եւ հրշեջ ծառայությանը պատկանող փոխադրամիջոցները:

2. Անդամ պետությունները, Հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո, կարող են բացառել սույն Հրահանգի գործողության շրջանակից կամ, համաձայն հատուկ դրույթների, բացառիկ հանգամանքներում շահագործվող կամ օգտագործվող որոշ փոխադրամիջոցներ եւ երբեք չշահագործվող, կամ գրեթե հազվադեպ մայրուղիներին շահագործվող՝ ներառյալ պատմական արժեք ներկայացնող փոխադրամիջոցները, որոնք արտադրված են եղել նախքան 1960 թվականի հունվարի 1-ը կամ որոնց շահագործումը ժամանակավորապես դադարեցվել է:

3. Անդամ պետությունները, Հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո, կարող են սահմանել պատմական արժեք ներկայացնող փոխադրամիջոցների փորձարկման սեփական չափանիշները:

Հոդված 5

Անկախ I եւ II հավելվածների դրույթներից՝ անդամ պետությունները կարող են՝

ա) առաջարկել շահագործման պիտանիության առաջին պարտադիր փորձարկման ժամկետը եւ, անհրաժեշտության դեպքում, պահանջել, որ փոխադրամիջոցը ներկայացվի փորձարկման՝ նախքան գրանցումը.

բ) սահմանել երկու հաջորդական պարտադիր փորձարկումների միջեւ ընկած առավել կարճ ժամանակահատված.

գ) լրացուցիչ սարքավորման փորձարկումը դարձնել պարտադիր.

դ) ընդլայնել փորձարկման ենթակա բաղադրիչների շրջանակը.

ե) ներառել փոխադրամիջոցների այլ կատեգորիաներ պարբերական փորձարկման պահանջի համատեքստում.

զ) սահմանել լրացուցիչ հատուկ փորձարկումներ.

է) պահանջել իրենց տարածքում գրանցված փոխադրամիջոցների արգելակային համակարգերի արդյունավետության նվազագույն չափանիշների առավել բարձր մակարդակ՝ II հավելվածով սահմանված չափանիշների համեմատությամբ եւ ներմուծել առավելագույն բեռնվածքով փոխադրամիջոցների փորձարկում, այն պայմանով, որ նմանատիպ պահանջները չեն գերազանցում փոխադրամիջոցի տեսակի սկզբնական հաստատման պահանջները.

ԳԼՈՒԽ III

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 6

1. Հանձնաժողովն ընդունում է II հավելվածում թվարկված բաղադրիչների փորձարկման նվազագույն չափանիշները եւ մեթոդները սահմանող առանձին հրահանգներ, ինչպես նաեւ այդ չափանիշներն ու մեթոդները տեխնիկական առաջընթացին համապատասխանեցնելու նպատակով կատարվող անհրաժեշտ փոփոխություններ:

2. Սույն Հրահանգի ոչ էական տարրերը լրացումների միջոցով փոփոխելու համար նախատեսված այդ ակտերն ընդունվում են՝ 7(2) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 7

1. Հանձնաժողովին աջակցում է սույն Հրահանգով «Մեխանիկական փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների շահագործման պիտանիության փորձարկումներ»-ը տեխնիկական առաջընթացին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ հարմարեցումների հարցերով կոմիտեն:

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով այդ որոշման 8-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 8

Արագության սահմանափակիչների կանոնավոր փորձարկում ներմուծելուց հետո ոչ ուշ, քան երեք տարվա ընթացքում Հանձնաժողովը, ձեռք բերված փորձի հիման վրա, ստուգում է, թե արդյոք սահմանված փորձարկումներն արդյունավետ են անսարք կամ վերաշահագործվող արագության սահմանափակիչների հայտնաբերման գործընթացում, կամ դիտարկում է փորձարկման կանոնները փոփոխության ենթարկելու անհրաժեշտությունը:

Հոդված 9

Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի հիմնադրույթների տեքստերը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 10

III հավելվածի Ա մասում նշված ակտերով փոփոխված թիվ 96/96/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում՝ չհակասելով III հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգներն

ազգային իրավունքում փոխատեղելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին:

Ուժը կորցրած Հրահանգին կատարվող հղումները պետք է դիտարկվեն որպես սույն Հրահանգին կատարվող հղումներ եւ պետք է ընթերցվեն ըստ IV հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակի:

Հոդված 11

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Հոդված 12

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ ԵՒ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Փոխադրամիջոցների կատեգորիաները	Փորձարկումների հաճախականությունը
1. Ուղեորափոխադրումների նպատակով նախատեսված մեխանիկական փոխադրամիջոցներ, որոնց նստատեղերի թիվը 8-ից ավելի է՝ բացառությամբ վարորդի նստելատեղի	Փոխադրամիջոցի առաջին անգամ շահագործվելու ամսաթվից սկսած մեկ տարի շարունակ եւ տարեկան փորձարկում հետագայում
2. Բեռնափոխադրումների նպատակով նախատեսված մեխանիկական փոխադրամիջոցներ, որոնց առավելագույն թույլատրելի զանգվածը գերազանցում է 3 500 կգ-ը	Փոխադրամիջոցի առաջին անգամ շահագործվելու ամսաթվից սկսած մեկ տարի շարունակ եւ տարեկան փորձարկում հետագայում
3. Կցորդներ եւ կիսակցորդներ, որոնց առավելագույն թույլատրելի զանգվածը գերազանցում է 3 500 կգ-ը	Փոխադրամիջոցի առաջին անգամ շահագործվելու ամսաթվից սկսած մեկ տարի շարունակ եւ տարեկան փորձարկում հետագայում
4. Տարսիներ, շտապօգնության մեքենաներ	Փոխադրամիջոցի առաջին անգամ շահագործվելու ամսաթվից սկսած մեկ տարի շարունակ եւ տարեկան փորձարկում հետագայում
5. Առնվազն չորս անիվ ունեցող մեխանիկական փոխադրամիջոցներ, որոնք սովորաբար օգտագործվում են ավտոճանապարհային բեռնափոխադրումների նպատակով եւ որոնց առավելագույն թույլատրելի զանգվածը չի գերազանցում 3 500կգ-ը՝ բացառությամբ գյուղատնտեսական տրակտորների եւ մեքենաների	Փոխադրամիջոցի առաջին անգամ շահագործվելու ամսաթվից չորս տարի անց եւ հետագայում յուրաքանչյուր երկու տարին մեկ
6. Ուղեորափոխադրումների համար նախատեսված առնվազն չորս անիվ ունեցող մեխանիկական	Փոխադրամիջոցի առաջին անգամ շահագործվելու ամսաթվից չորս տարի անց եւ հետագայում

փոխադրամիջոցներ, որոնց նստատեղերի թիվը 8-ից ավելի է՝ բացառությամբ վարորդի նստելատեղի	յուրաքանչյուր երկու տարին մեկ
--	-------------------------------

▼M1

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՊԱՐՏԱԴԻՐ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ Ներածություն

1.

2.

Կոնվենցիայի գործողության ոլորտը

3.

Շահագործման պիտանիության հավաստագիր

4.

Ստուգման նվազագույն պահանջներ

0.

Տրանսպորտային միջոցների նույնականացում

1.

Արգելակային սարքավորումներ

2.

Ղեկ

3.

Տեսանելիություն

4.

Լապտերներ, անդրադարձիչներ եւ էլեկտրական սարքավորումներ

5.

Սոնիներ, անիվներ, անվադողեր եւ կախոց

6.

Ամրաշրջանակ (շաստի) եւ ամրաշրջանակի հարմարանքներ

7.

Այլ սարքավորումներ

8.

Անսարքություններ

9.

Ուղեւորափոխադրումներ իրականացնող M2, M3 փոխադրամիջոցների լրացուցիչ փորձարկումներ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հավելվածով սահմանվում են փորձարկման ենթակա փոխադրամիջոցների համակարգերը եւ բաղադրիչ մեքենամասերը, մանրամասն ներկայացվում է դրանց

փորձարկման մեթոդը եւ փոխադրամիջոցի տեխնիկապես բարվոք վիճակի մասին որոշում կայացնելիս կիրառվող չափորոշիչները,

Եթե փոխադրամիջոցը համարվում է անսարք՝ փորձարկված բաղադրիչների առումով, ապա անդամ պետություններում իրավասու մարմինները պետք է ընդունեն փոխադրամիջոցի շահագործման պայմաններ սահմանելու ընթացակարգ՝ նախքան փոխադրամիջոցի շահագործման պիտանիության մեկ այլ փորձարկում անցնելը:

Փորձարկումը պետք է ընդգրկի առնվազն ստորեւ թվարկված բաղադրիչները՝ պայմանով, որ վերջիններս առնչվում են տվյալ անդամ պետությունում փորձարկվող փոխադրամիջոցի սարքերին:

Փորձարկումները պետք է իրականացվեն ներկայումս առկա տեխնիկաների եւ սարքավորումների կիրառմամբ՝ առանց փոխադրամիջոցի որեւէ մասի ապամոնտաժման կամ հեռացման համար նախատեսված սարքերի օգտագործման:

Թվարկված բոլոր բաղադրիչները պետք է պարտադիր կերպով հաշվի առնվեն փոխադրամիջոցների պարբերական փորձարկման ընթացքում՝ բացառությամբ (X) ցուցիչով նշվածների, որոնք առնչվում են փոխադրամիջոցի տեխնիկական վիճակին եւ վերջինիս շահագործման պիտանիությանը, սակայն էական չեն պարբերական ստուգման ընթացքում:

«Անսարքության պատճառներ» չեն դիտարկվում այն դեպքերում, երբ առնչվում են այնպիսի պահանջների, որոնք սահմանված չեն եղել փոխադրամիջոցի հաստատման համապատասխան օրենսդրությամբ՝ փոխադրամիջոցն առաջին անգամ գրանցելու կամ առաջին անգամ շահագործման հանձնելու պահին կամ արդիականացման պահանջներով:

Եթե փորձարկման մեթոդը ենթադրում է արտաքին զննում, ապա բաղադրիչ մասերն ուսումնասիրելուց զատ՝ տեսուչը (ստուգող անձը) պետք է, անհրաժեշտության դեպքում, նաեւ շոշափի դրանք, գնահատի աղմուկի մակարդակները կամ առանց սարքավորումների կիրառման օգտագործի ստուգմանը համապատասխան ցանկացած այլ միջոց:

2. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

Կոնվենցիան ներառում է առնվազն ստորեւ թվարկված բաղադրիչները՝ պայմանով, որ դրանք առնչվում են փորձարկվող փոխադրամիջոցի մեջ տեղադրված սարքերին:

0) փոխադրամիջոցի նույնականացում,

1) արգելակային սարքավորումներ,

- 2) դեկ,
- 3) տեսանելիություն,
- 4) լուսավորման սարքավորումներ եւ էլեկտրահամակարգի բաղադրամասեր,
- 5) սոնիներ, անիվներ, անվադողեր, կախոց,
- 6) ամրաշրջանակ (շաստի) եւ ամրաշրջանակի հարմարանքներ,
- 7) այլ սարքավորումներ,
- 8) անսարքություններ,
- 9) ուղեւորափոխադրումներ իրականացնող M2 եւ M3 փոխադրամիջոցների լրացուցիչ փորձարկումներ:

3. ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Փոխադրամիջոցի համար պատասխանատու անձը կամ վարորդը գրավոր ծանուցվում են փոխադրամիջոցի թերությունների, փորձարկման արդյունքների եւ իրավական հետեւանքների մասին:

Փոխադրամիջոցի պարտադիր պարբերական փորձարկումների դեպքում տրամադրվող շահագործման պիտանիության հավաստագրերը պետք է ներառեն առնվազն հետեւյալ տարրերը.

- 1) փոխադրամիջոցի նույնականացման համարը,
- 2) գրանցման պետհամարանիշը եւ գրանցող երկրի պետական խորհրդանիշը,
- 3) փորձարկումն իրականացնելու վայրը եւ ամսաթիվը,
- 4) վազքաչափի ցուցմունքների գրանցումը՝ փորձարկման ընթացքում (հարկ եղած դեպքում),
- 5) փոխադրամիջոցների կարգը՝ առկայության դեպքում,
- 6) հայտնաբերված թերությունները եւ դրանց տեսակը (առաջարկվում է պահպանել սույն հավելվածի 5–րդ պարբերության համարակալման հաջորդականությունը),
- 7) փոխադրամիջոցի ընդհանուր գնահատումը,

8) հաջորդ պարբերական փորձարկման ամսաթիվը (եթե նմանատիպ տեղեկատվություն չի ապահովվում այլ միջոցներով),

9) ստուգում անցկացնող կազմակերպության անունը եւ ստորագրությունը, կամ փորձարկման համար պատասխանատու տեսուչի ինքնության հաստատումը,

4. ՍՏՈՒԳՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Ստուգումը պետք է ներառի առնվազն այն բաղադրիչները եւ իրականացվի ստուգման այն նվազագույն պահանջների ու մեթոդների համաձայն, որոնք թվարկված են ստորեւ: Անսարքության պատճառներն այն թերություններն են, որոնք կարող են հայտնաբերվել:

Բաղադրիչներ	Փորձարկման մեթոդիկա	Անսարքության պատճառներ
0. ՓՈՒԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ		
0.1. Գրանցման պետհամարանիշներ (պահանջվելու դեպքում)	Արտաքին զննում	<p>ա) բացակայող կամ վայր ընկնելու հավանականություն առաջացնող՝ անապահով ամրակցված պետհամարանիշ (պետհամարանիշներ).</p> <p>բ) նշագիրը (համարանիշը) բացակայում է կամ անընթեռնելի է.</p> <p>գ) չի համապատասխանում փոխադրամիջոցի փաստաթղթերին կամ տեխնիկական տեղեկաթերթերին:</p>
0.2. Փոխադրամիջոցի նույնականացման սերիական համար (ամրաշրջանակի (շասսիի) համար)	Արտաքին զննում	<p>ա) բացակայում է կամ հնարավոր չէ գտնել.</p> <p>բ) թերի է, անընթեռնելի.</p>

		<p>գ) չի համապատասխանում տրանսպորտային միջոցի փաստաթղթերին կամ տեխնիկական տեղեկաթերերին:</p>
--	--	--

1. ԱՐԳԵԼԱԿԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

1.1. Համակարգի տեխնիկական վիճակը եւ աշխատանքը

<p>1.1.1. Հիմնական (աշխատանքային) արգելակի ոտնակ (կառավարման լծակ)</p>	<p>Արգելակային համակարգի գործադրման ընթացքում կատարվող բաղադրիչ մեքենամասերի արտաքին զննում</p> <p>Ծանոթագրություն. Ուժեղարարով արգելակային համակարգերով փոխադրամիջոցների արգելակների աշխատունակությունը պետք է ստուգվի (հաստատվի) շարժիչն անջատված վիճակում</p>	<p>ա) Լծակը չափազանց ձիգ է բ) նկատվում է թույլատրելից ավելի մաշվածություն կամ բացակների անթույլատրելի ավելացում:</p>
<p>1.1.2. Արգելակման ոտնակի (լծակի) աշխատունակությունը եւ ոտնակի ազատ ընթացքի մեծությունը</p>	<p>Արգելակային համակարգի գործադրման ընթացքում կատարվող բաղադրիչ մեքենամասերի արտաքին զննում</p> <p>Ծանոթագրություն. Ուժեղարարով արգելակային համակարգերով փոխադրամիջոցների</p>	<p>ա) Թույլատրելից ավելի կամ ոտնակի (լծակի) ոչ բավարար ռեզերվային ընթացք. բ) արգելակի ոտնակը չի վերադառնում ելակետային դիրքի. գ) արգելակի ոտնակի վրա հակասահքային վրադիրները բացակայում են կամ</p>

	<p>արգելակների աշխատունակությունը պետք է ստուգվի շարժիչն անջատված վիճակում</p>	<p>նախշանկարները չափից ավելի մաշված են:</p>
<p>1.1.3. Վակուումային պոմպ կամ ճնշակ (կոմպրեսոր) եւ բաքեր</p>	<p>Բաղադրիչ մեքենամասերի արտաքին զննում նորմալ աշխատանքային ճնշման ժամանակ Անհրաժեշտ է ստուգել վակուումի կամ օդի ճնշման հաստատման համար պահանջվող ժամանակը, որպեսզի հաստատվի անվտանգ աշխատանքային ռեժիմի հնարավորություն եւ նախազգուշացնող սարքի, բազմակոնտուրային ապահովիչ փականի եւ ճնշաթափման փականի հուսալի աշխատանք</p>	<p>ա) Անբավարար ճնշում (վակուում) առնվազն երկու արգելակում կատարելու համար այն բանից հետո, երբ միացել է նախազգուշացնող սարքը (կամ չափիչ սարքը հաղորդում է վտանգավոր իրադրության մասին).</p> <p>բ) անվտանգ աշխատանքային ռեժիմի նպատակով օդի ճնշման (վակուումի) վերականգնմանը հատկացվող ժամանակահատված, որը չի համապատասխանում սահմանված պահանջներին.</p> <p>գ) առկա է բազմակոնտուրային ապահովիչ կամ ճնշաթափման փականի անսարքություն.</p> <p>դ) ճնշման զգալի անկում առաջացնող կամ մեծ քանակությամբ օդի արտահոսք.</p> <p>ե) արգելակային համակարգի աշխատանքի վրա հավանական բացասական ազդեցություն ունեցող արտաքին վնասվածք:</p>

1.1.4. Ցածր ճնշման նախազգուշացնող չափիչ կամ ցուցիչ	Գործառական փորձարկում	Անսարք կամ վնասված չափիչ սարք կամ ցուցիչ
1.1.5. Ձեռքով ղեկավարվող արգելակի կառավարման փական	Արգելակային գործադրման կատարվող մեքենամասերի զննում	<p>ա) վնասված, ճաք կամ չափից ավելի մաշվածություն ունեցող փական.</p> <p>բ) փականի կառավարումը հուսալի չէ կամ փականն անսարք է.</p> <p>գ) ոչ հուսալի միացումներ կամ արտահոսքեր համակարգում.</p> <p>դ) թերի աշխատանք:</p>
1.1.6. Կայանման արգելակի ակտիվարար, լծակային կառավարում, կայանման արգելակի լծակի արգելանիվային մեխանիզմ, կայանման էլեկտրոնային արգելակ	Արգելակային գործադրման կատարվող մեքենամասերի զննում	<p>ա) Արգելանիվը չի ապահովում պատշաճ արգելակում.</p> <p>բ) կառավարման լծակի կամ արգելանիվի թույլատրելից ավելի մաշվածություն.</p> <p>գ) լծակի՝ սխալ կարգավորման (հարմարեցման) մասին վկայող թույլատրելից ավելի տեղաշարժ.</p> <p>դ) ակտիվարարը բացակայում է, վնասված է կամ սարքին չէ.</p> <p>ե) սխալ աշխատանք, նախազգուշացնող սարքի ցուցիչը հաղորդում է անսարքության մասին:</p>
1.1.7. Արգելակման փականներ (ճնշման փականներ, հավասարակշռող փականներ, կարգավորիչներ)	Արգելակային գործադրման կատարվող	<p>ա) Փականը վնասված է կամ նկատվում է օդի թույլատրելից ավելի արտահոսք.</p>

	մեքենամասերի արտաքին զննում	բ) ճնշակից յուղային խառնուրդների թույլատրելից ավելի արտամղում. գ) փականը հուսալի չէ կամ չի տեղադրվել պատշաճ կերպով. դ) հիդրավլիկ արգելակային հեղուկի արտամղում կամ արտահոսք:
1.1.8. Կցորդի արգելակների հաղորդակի կցորդիչներ (էլեկտրական եւ պնեմատիկ)	Անջատեք եւ միացրեք արգելակային համակարգի կցորդիչը քարշակի եւ կցորդի միջեւ	ա) Ծորակը (վենտիլը) կամ ինքնամիացվող կցորդիչը (փականը) հուսալի չէ կամ պատշաճորեն չի տեղադրվել. բ) ծորակը (վենտիլը) կամ փականը հուսալի չէ կամ պատշաճորեն չի տեղադրվել. գ) թույլատրելից ավելի արտահոսքեր. դ) անբավարար աշխատանք:
1.1.9. Էներգակուտակիչ ռեզերվուար ճնշման բաք	Արտաքին զննում	ա) Բաքը վնասված է, քայքայված կամ արտահոսում է. բ) ջրահեռացման (արտաթողման) համակարգը սարքին չէ. գ) բաքը հուսալի չէ կամ չի տեղադրվել պատշաճ կերպով:
1.1.10. Արգելակային մեխանիզմներ, արգելակային գլխավոր գլան (հիդրավլիկ համակարգեր)	Արգելակային գործադրման կատարվող համակարգի ընթացքում բաղադրիչ	ա) Վնասված կամ անարդյունավետ գործող մեխանիզմ.

	մեքենամասերի զննում	արտաքին	բ) արգելակային գլխավոր գլանը վնասված է կամ հերմետիկ չէ. գ) արգելակային գլխավոր գլանը հուսալի չէ. դ) անբավարար քանակության արգելակային հեղուկ. ե) արգելակային գլխավոր գլանի ռեզերվուարի թասակը բացակայում է. զ) արգելակային հեղուկի ցածր մակարդակը ցուցադրող ազդանշանային լամպը միացել է կամ վնասված է. է) արգելակային հեղուկի ցածր մակարդակը ցուցադրող նախազգուշացնող սարքի սխալ աշխատանք:
1.1.11. Արգելակային համակարգի կոշտ խողովակներ	Արգելակային գործադրման կատարվող մեքենամասերի զննում	համակարգի ընթացքում բաղադրիչ արտաքին	ա) Աշխատանքի խափանման կամ ճաքի առաջացման մոտալուտ վտանգ. բ) խողովակները կամ միացումները հերմետիկ չեն. գ) խողովակները վնասված են կամ չափից ավելի քայքայված. դ) խողովակների սխալ տեղադրում:
1.1.12. Արգելակի ճկափողեր	Արգելակային գործադրման	համակարգի ընթացքում	ա) Աշխատանքի խափանման կամ ճաքի գոյացման մոտալուտ

	<p>կատարվող մեքենամասերի գննում</p> <p>բաղադրիչ արտաքին</p>	<p>վտանգ.</p> <p>բ) ճկափողերը վնասված են, մաշված, ձեւախախտված կամ չափազանց կարճ.</p> <p>գ) ճկափողերը կամ միացումները հերմետիկ չեն.</p> <p>դ) ճկափողերը փքվում են ճնշման տակ.</p> <p>ե) ճկափողերի վրա դիտարկվում են անցքեր:</p>
<p>1.1.13. Արգելակման ժապավեն եւ կոճղակներ</p>	<p>Արտաքին գննում</p>	<p>ա) ժապավենը կամ կոճղակն ունի չափից ավելի մաշվածություն.</p> <p>բ) ժապավենը կամ կոճղակն աղտոտված է (յուղ, ճարպ եւ այլն).</p> <p>գ) ժապավենը կամ կոճղակը բացակայում է:</p>
<p>1.1.14. Արգելակային թմբուկներ, արգելակման սկավառակներ</p>	<p>Արտաքին գննում</p>	<p>ա) Թմբուկը կամ սկավառակն ունի չափից ավելի մաշվածություն, անհարթություն, ճաքած է, հուսալի չէ կամ կոտրված է.</p> <p>բ) թմբուկը կամ սկավառակն աղտոտված է (յուղ, ճարպ եւ այլն).</p> <p>գ) թմբուկը կամ սկավառակը բացակայում է.</p>

			դ) մաշվածքի ցուցասարքը հուսալի չէ:
1.1.15. Արգելակի մետաղաճոպաններ, ձգաճոպաններ (ձգաձողեր), լծակներ, միացքներ	Արգելակային գործադրման կատարվող մեքենամասերի զննում	համակարգի ընթացքում բաղադրիչ արտաքին	<p>ա) Մետաղաճոպանը վնասված է կամ հանգուցված.</p> <p>բ) բաղադրիչ մասերը չափից ավելի մաշված կամ քայքայված են.</p> <p>գ) մետաղաճոպանը, ձգաճոպանը (ձգաձող) կամ հողակապը հուսալի չեն.</p> <p>դ) մետաղաճոպանի պարուտակը վնասված է.</p> <p>ե) արգելակային համակարգի մեքենամասերի ազատ (անկաշկանդ) շարժման սահմանափակում.</p> <p>զ) լծակների (միացքների)՝ ոչ պատշաճ կարգավորման կամ չափից ավելի մաշվածության մասին վկայող սխալ շարժում:</p>
1.1.16. Արգելակային հաղորդակներ (ներառյալ զսպանակներ կամ հիդրավլիկ գլաններ)	Արգելակային գործադրման կատարվող մեքենամասերի զննում	համակարգի ընթացքում բաղադրիչ արտաքին	<p>ա) Հաղորդակը ճաքած է կամ վնասված.</p> <p>բ) հաղորդակը հերմետիկ չէ.</p> <p>գ) հաղորդակը հուսալի չէ կամ պատշաճորեն չի տեղադրվել</p> <p>դ) հաղորդակը չափից ավելի քայքայված է.</p> <p>ե) կառավարման մխոցի կամ</p>

		<p>արգելակախուցի մեմբրանային մեխանիզմի ոչ բավարար կամ թույլատրելիից ավելի ընթացք.</p> <p>զ) փոշեպաշտպան ծածկոցը (թասակը) բացակայում է կամ ծայրահեղ վնասված է:</p>
<p>1.1.17. Հետին արգելակային մեխանիզմների ճնշման կարգավորիչ</p>	<p>Արգելակային գործադրման կատարվող մեքենամասերի զննում</p> <p>համակարգի ընթացքում բաղադրիչ արտաքին</p>	<p>ա) Նկատվում է թերի միացք.</p> <p>բ) միացքը սխալ է հարմարեցված.</p> <p>գ) փականը լուված է կամ սարքին չէ.</p> <p>դ) փականը բացակայում է.</p> <p>ե) տեխնիկական տվյալների ցուցանակը բացակայում է.</p> <p>զ) տվյալներն անընթեռնելի են կամ չեն համապատասխանում սահմանված պահանջներին:</p>
<p>1.1.18. Մաշվածքի փոխհատուցիչներ (կոմպենսատորներ) եւ ցուցիչներ</p>	<p>Արտաքին զննում</p>	<p>ա) Փոխհատուցիչը (կոմպենսատորը) վնասված է, վառված կամ ճշգրիտ չի շարժվում, ունի չափից ավելի մաշվածություն կամ սխալ կարգավորում.</p> <p>բ) փոխհատուցիչը (կոմպենսատորը) սարքին չէ.</p> <p>գ) փոխհատուցիչը (կոմպենսատորը) սխալ է տեղադրված կամ փոխարինված</p>

		է մեկ այլ փոխհատուցիչով:
1.1.19. Օժանդակ արգելակային համակարգ (որտեղ անհրաժեշտ է կամ պահանջվում է)	Արտաքին գնում	ա) Միակցիչները կամ ամրակապերը հուսալի չեն. բ) համակարգն ակնհայտորեն անսարք է կամ բացակայում է:
1.1.20. Կցորդի արգելակների ավտոմատ գործողություն	Անջատեցեք քարշակի եւ կցորդի միջեւ գտնվող արգելակային կցորդիչը	Արգելակային կցորդիչի անջատված լինելու դեպքում կցորդի արգելակն ավտոմատ կերպով չի գործարկվում:
1.1.21. Համալիր արգելակային համակարգ	Արտաքին գնում	ա) Համակարգային այլ սարքեր (ինչպես, օրինակ՝ հակասառիչ (անտիֆրիզ) խողովակը, օդի չորացուցիչը եւ այլն) արգելակային համակարգի աշխատունակության վրա բացասաբար ազդելու աստիճանի վնասված են արտաքին մակերեսում կամ չափից ավելի քայքայված են. բ) առկա է օդի արտահոսք կամ արտահոսք հակասառիչ խողովակից. գ) բաղադրիչ որեւէ մաս հուսալի չէ կամ չի տեղադրվել պատշաճ կերպով. դ) բաղադրիչ որեւէ մասի ոչ պատշաճ վերանորոգում կամ ձեւափոխություն:

<p>1.1.22. Փորձնական միացումներ (որտեղ անհրաժեշտ է կամ պահանջվում է)</p>	<p>Արտաքին զննում</p>	<p>ա) Բացակայում են. բ) միացումները վնասված են, ոչ պիտանի կամ հերմետիկ չեն:</p>
<p>1.2. Հիմնական (աշխատանքային) արգելակային համակարգի աշխատունակությունը և արդյունավետությունը</p>		
<p>1.2.1. Աշխատունակություն</p>	<p>Փորձարկումն անհրաժեշտ է իրականացնել արգելակային ստատիկ փորձասարքի կիրառմամբ կամ, եթե հնարավոր չէ իրականացնել ստուգումը ավտոճանապարհային փորձարկման ընթացքում, անհրաժեշտ է սեղմել արգելակը դեպի վեր՝ գործադրելով առավելագույն ճիգ:</p>	<p>ա) արգելակային ճիգը մեկ կամ մի քանի անիվների վրա բավարար չէ. բ) ցանկացած անիվից ստացվող արգելակային ճիգը նույն սոնու վրա գտնվող մեկ այլ անիվից ստացվող առավելագույն ճիգից 70 %-ով պակաս է. կամ նկատվում է փոխադրամիջոցի թույլատրելիից ավելի շեղում ուղիղ գծից ավտոճանապարհային փորձարկման դեպքում. գ) չկա արգելակային ճիգի (բլոկավորման) աստիճանական տատանում. դ) ցանկացած անիվի արգելակման անբնական ձգձգում. ե) նկատվում է արգելակման ուժի թույլատրելիից ավելի տատանում անիվի մեկ լրիվ պտույտի ընթացքում:</p>

<p>1.2.2. Արդյունավետությունը</p>	<p>Փորձարկումը պետք է իրականացվի արգելակային ստատիկ փորձասարքի կիրառմամբ, իսկ եթե հնարավոր չէ օգտագործել նմանատիպ սարքավորում՝ տեխնիկական պատճառներով, ապա ձայնագրող դանդաղաչափիչի կիրառմամբ պետք է իրականացվի ավտոճանապարհային փորձարկում:</p> <p>Փոխադրամիջոցները կամ այն կցորդը, որոնց առավելագույն թույլատրելի զանգվածը գերազանցում է 3 500 կգ-ը, պետք է ստուգվեն ԻՍՕ 21069 չափանիշներին համապատասխան կամ համարժեք մեթոդներով:</p> <p>Ավտոճանապարհային փորձարկումները պետք է իրականացվեն եղանակային չոր պայմաններում հարթ եւ ուղիղ ճանապարհի վրա:</p>	<p>Չի ապահովում առնվազն ներքոթվարկյալ տվյալները.</p> <p>Սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո առաջին անգամ գրանցված փոխադրամիջոցներ՝</p> <ul style="list-style-type: none"> — N1 կատեգորիային պատկանող՝ 50 տոկոս — M1 կատեգորիային պատկանող՝ 58 տոկոս — M2 եւ M3 կատեգորիաներին պատկանող՝ 50 տոկոս — N2 եւ N3 կատեգորիաներին պատկանող՝ 50 տոկոս — O2 կատեգորիային պատկանող՝ (XX) (O3 եւ O4), — կիսակցորդների դեպքում՝ 45 տոկոս — կցորդիչների դեպքում՝ 50 տոկոս <p>Նախքան սույն Հրահանգն ուժի մեջ մտնելը՝ գրանցված փոխադրամիջոցներ՝</p> <ul style="list-style-type: none"> — N1 կատեգորիային պատկանող՝ 45 տոկոս — M1, M2 եւ M3 կատեգորիաներին պատկանող՝
-----------------------------------	---	---

		<p>50 տոկոս (2)</p> <p>— N2 եւ N3 կատեգորիաներին պատկանող՝ 43 տոկոս (3)</p> <p>— O2 կատեգորիային պատկանող (XX) (O3 եւ O4), 40 % (4)</p> <p>Այլ կատեգորիաներ (XX)</p> <p>— L կատեգորիաներին պատկանող (ներառյալ երկու արգելակները),</p> <p>—</p> <p>— L1e կատեգորիային պատկանող՝ 42 տոկոս</p> <p>— L2e, L6e կատեգորիաներին պատկանող՝ 40 տոկոս</p> <p>— L3e կատեգորիային պատկանող՝ 50 տոկոս — L4e կատեգորիային պատկանող՝ 46 տոկոս — L5e, L7e կատեգորիաներին պատկանող՝ 44 տոկոս</p> <p>— L կատեգորիաներին պատկանող (ներառյալ հետեւի անիվների արգելակները),</p> <p>—</p> <p>— բոլոր կատեգորիաները՝ 25 տոկոս</p>
--	--	--

1.3. Օժանդակ (վթարային) արգելակային համակարգի աշխատունակությունը եւ արդյունավետությունը

(Եթե առկա է առանձին համակարգով)

1.3.1. Աշխատունակությունը

Եթե օժանդակ (վթարային) արգելակային համակարգը հիմնական (աշխատանքային) արգելակային համակարգից առանձին է, ապա պետք է կիրառել փորձարկման 1.2.1. կետով սահմանված մեթոդիկան:

ա) արգելակային ճիգը մեկ կամ մի քանի անիվների վրա բավարար չէ.

բ) ցանկացած անիվից ստացվող արգելակային ճիգը նույն սոնու վրա գտնվող մեկ այլ անիվից ստացվող առավելագույն ճիգից 70 տոկոսով պակաս է.

գ) կամ նկատվում է փոխադրամիջոցի թույլատրելից ավելի շեղում ուղիղ գծից ավտոճանապարհային փորձարկման դեպքում.

դ) չկա արգելակային ճիգի (բլոկավորման) աստիճանական տատանում:

1.3.2. Արդյունավետությունը

Եթե օժանդակ (վթարային) արգելակային համակարգը հիմնական (աշխատանքային) արգելակային համակարգից առանձին է, ապա պետք է կիրառել փորձարկման 1.2.2. կետով սահմանված մեթոդիկան:

Արգելակային ճիգը 1.2.2. բաժնով սահմանված հիմնական (աշխատանքային) արգելակի աշխատունակության մակարդակից պակաս է 50 %-ով(5) թույլատրելի առավելագույն զանգվածի առումով, կամ կիսակցորդների դեպքում առանցքի ընդհանուր թույլատրելի առավելագույն զանգվածի առումով.

(բացառությամբ L1e եւ L3e

		կատեգորիաների):
1.4. Կայանման արգելակային համակարգի աշխատունակությունը եւ արդյունավետությունը		
1.4.1. Աշխատունակություն ը	Արգելակը սեղմել արգելակային ստատիկ փորձասարքի վրա փորձարկման ընթացքում եւ (կամ) գործարկել՝ դանդաղաչափիչով՝ ավտոճանապարհային փորձարկման ընթացքում:	Նկատվում է արգելակի մի կողմի անսարքություն կամ փոխադրամիջոցի թույլատրելից ավելի շեղում ուղիղ գծից ավտոճանապարհային փորձարկման դեպքում:
1.4.2. Արդյունավետությունը	Փորձարկումն անհրաժեշտ է իրականացնել արգելակային ստատիկ փորձասարքի կիրառմամբ կամ ավտոճանապարհային փորձարկմամբ՝ օգտագործելով ցուցիչ կամ ձայնագրող դանդաղաչափիչ կամ թեքելով փոխադրամիջոցը նախօրոք փորձարկված թեքության վրա: Բեռնատար փոխադրամիջոցները հնարավորության դեպքում պետք է փորձարկվեն բեռնված վիճակում:	Չի ապահովվում արգելակային առնվազն 16 % գործակից բոլոր փոխադրամիջոցների համար թույլատրելի առավելագույն զանգվածի դեպքում, կամ, 12 % գործակից՝ մեխանիկական փոխադրամիջոցների համար փոխադրամիջոցի համակցությունների թույլատրելի առավելագույն զանգվածի դեպքում, անկախ նրանից, թե որ զանգվածն է գերակշռում: (բացառությամբ L1e եւ L3e կատեգորիաների):
1.5. Կայուն արգելակման համակարգի աշխատունակությունը	Արտաքին զննում եւ հնարավորության դեպքում անհրաժեշտ է ստուգել՝ համակարգը գործում է թե ոչ:	ա) չկա աստիճանական տատանում (չի կիրառվում դանդաղարար արգելակային համակարգի դեպքում)։

		բ) համակարգը չի գործում:
1.6. Հակաշրջափակիչ արգելակային համակարգ (արգելակային հակաբլոկավորման համակարգ (ABS))	Արտաքին ստուգում եւ նախազգուշացնող սարքի ստուգում	<p>ա) նախազգուշացնող սարքի աշխատանքը խափանված է.</p> <p>բ) նախազգուշացնող սարքը ցույց է տալիս համակարգի խափանում.</p> <p>գ) անիվի պտտման արագության տվիչները բացակայում են կամ վնասված են.</p> <p>դ) հաղորդալարերը վնասված են.</p> <p>ե) այլ բաղադրիչ մասերը բացակայում են կամ վնասված են:</p>
1.7. Էլեկտրոնային կառավարման արգելակային համակարգ (EBS)	Նախազգուշացնող սարքի արտաքին ստուգում	<p>ա) նախազգուշացնող սարքի աշխատանքը խափանված է.</p> <p>բ) նախազգուշացնող սարքը ցույց է տալիս համակարգի խափանում.</p>
2. ՂԵԿ		
2.1. Մեխանիզմի տեխնիկական վիճակը		
2.1.1. Ղեկային մեխանիզմի տեխնիկական վիճակը	Անհրաժեշտ է պտտել ղեկանիվը բլոկավորման աստիճանից-աստիճան, երբ փոխադրամիջոցը գտնվում է տեխնիկական զննման փոսի կամ ամբարձիչի վրա, իսկ ընթացանիվներն օդում են կամ	<p>ա) առկա են մեխանիզմի աշխատանքային անհարթություններ.</p> <p>բ) ձեւախախտված ատամնավոր լիսեռ կամ մաշված փորակներ.</p> <p>գ) նկատվում է ատամնավոր սեկտորի լիսեռի չափից ավելի</p>

	<p>պտտվող սեղանի վրա: Դեկային մեխանիզմի աշխատանքի արտաքին ստուգում:</p>	<p>մաշվածություն. դ) նկատվում է ատամնավոր սեկտորի լիսեռի թույլատրելից ավելի պտույտ. ե) մեխանիզմում առկա են արտահոսքեր:</p>
<p>2.1.2. Դեկային մեխանիզմի հենատուփ (կարտեր)</p>	<p>Անհրաժեշտ է պտտել ղեկանիվը (ղեկային վարման ձգաձողը) ժամացույցի սլաքի ուղղությամբ եւ հակառակը կամ օգտագործել հատուկ հարմարեցված անիվի խաղի չափման դետեկտոր, երբ փոխադրամիջոցը գտնվում է տեխնիկական զննման փուլի կամ ամբարձիչի վրա, եւ մեքենայի ընթացանիվները գետնի վրա են: Արտաքին զննում՝ ստուգելու, թե ինչպես է ղեկային մեխանիզմի հենատուփն ամրացված շասիին:</p>	<p>ա) ղեկային մեխանիզմի հենատուփը (կարտերը) պատշաճ կերպով չի ամրացված. բ) շասսիում նկատվում են երկարացած ուղղորդող անցքեր. գ) բացակայող կամ կոտրված ամրացման հեղույսներ. դ) ղեկային մեխանիզմի հենատուփը (կարտեր) կոտրված է:</p>
<p>2.1.3. Դեկի շարժաբերի տեխնիկական վիճակը</p>	<p>Անհրաժեշտ է պտտել ղեկանիվը (ղեկային վարման ձգաձողը) ժամացույցի սլաքի ուղղությամբ եւ հակառակը կամ օգտագործել հատուկ հարմարեցված անիվի խաղի չափման դետեկտոր, երբ փոխադրամիջոցը գտնվում է</p>	<p>ա) բաղադրիչ մասերի միջեւ շտկման ենթակա հարաբերական տեղափոխություն. բ) նկատվում է հողակապերի չափից ավելի մաշվածություն. գ) առկա է բաղադրիչ որեւէ մասի</p>

	<p>տեխնիկական զննման փուսի կամ ամբարձիչի վրա, եւ մեքենայի ընթացանիվները գետնի վրա են: Ղեկային մեխանիզմի բաղադրիչների արտաքին զննում՝ մաշվածության եւ կոտրվածքների հայտնաբերման անվտանգության նկատառումներով:</p>	<p>կոտրվածք կամ ձեւախախտում. դ) ապահովիչները բացակայում են. ե) բաղադրիչ մասերի տարառանցքություն (ինչպես, օրինակ՝ ղեկային լայնական մետաղաձողի կամ ղեկային երկայնական մետաղաձողի). զ) ոչ պատշաճ վերանորոգում կամ ձեւափոխություն. է) փոշեպաշտպան վահանը բացակայում է, վնասված է կամ տեխնիկապես վատթարագույն վիճակում է:</p>
<p>2.1.4. Ղեկի շարժաբերի աշխատանքը</p>	<p>Անհրաժեշտ է պտտել ղեկանիվը բլոկավորման աստիճանից-աստիճան, երբ փոխադրամիջոցը գտնվում է տեխնիկական զննման փուսի կամ ամբարձիչի վրա, ընթացանիվները գետնի վրա են, իսկ շարժիչը (ուժեղարարով ղեկային կառավարման համակարգ) գործադրված է: Շարժաբերի աշխատանքի արտաքին զննում:</p>	<p>ա) նկատվում է շարժական ղեկի շարժաբերի աշխատանքով առաջացող նստվածքագոյացում ամրաշրջանակի (շասսիի) ֆիքսված հատվածամասում. բ) կառավարվող անիվների շրջադարձի անկյան սահմանափակիչները չեն աշխատում կամ բացակայում են:</p>
<p>2.1.5. Ուժեղարարով ղեկային կառավարման համակարգ</p>	<p>Անհրաժեշտ է ստուգել համակարգում արտահոսքերի առկայությունը եւ հիդրավլիկ</p>	<p>ա) նկատվում է հեղուկի արտահոսք.</p>

	<p>հեղուկի պաշարի մակարդակը (եթե տեսանելի է) Անհրաժեշտ է ստուգել, որ ուժեղարարով ղեկային կառավարման համակարգն աշխատում է, երբ ընթացանիվները գետնի վրա են, իսկ շարժիչը գործադրված է</p>	<p>բ) անբավարար քանակությամբ հեղուկ. գ) մեխանիզմը չի աշխատում. դ) մեխանիզմը կոտրված է կամ հուսալի չէ. ե) բաղադրիչ մասերի տարառանցքություն կամ նստվածքագոյացում. զ) ոչ պատշաճ վերանորոգում կամ ձեւափոխություն. է) մետաղաճոպանները (ճկափողերը) վնասված են, չափից ավելի քայքայված:</p>
--	--	--

2.2. Ղեկանիվ, ղեկասյուն եւ ղեկային վարման ձգաձող

<p>2.2.1. Ղեկանիվի (ղեկային վարման ձգաձողի) տեխնիկական վիճակը</p>	<p>Անհրաժեշտ է պտտել ղեկանիվը ժամացույցի սլաքի ուղղությամբ մինչեւ վերջ եւ գործադրել թեթեւակի վերուվար ճնշում, երբ ընթացանիվները գետնի վրա են Ղեկային խաղի արտաքին զննում</p>	<p>ա) ղեկանիվի եւ ղեկասյան միջեւ հարաբերական տեղափոխություն, որը վկայում է խաղացքի մասին. բ) ղեկային անվակունդի սեւեռակը բացակայում է. գ) առկա է ղեկային անվակունդի, անվահեծի (օղագոտու) կամ անվաճաղի կոտրվածք կամ խաղացք:</p>
<p>2.2.2. Ղեկասյուն (ղեկային ձգանի ծայրակալներ)</p>	<p>Անհրաժեշտ է հրել եւ քաշել ղեկանիվը ղեկասյանը զուգահեռ, ղեկանիվը (ղեկային վարման ձգաձողը) հրել</p>	<p>ա) նկատվում է ղեկանիվի կենտրոնի նկատմամբ թույլատրելիից ավելի վերուվար տեղաշարժ.</p>

	<p>տարբեր ուղղություններով դեպի ղեկային ձգանի ծայրակալների անկյուններ, երբ փոխադրամիջոցը գտնվում է տեխնիկական զննման փուսի կամ ամբարձիչի վրա: Խաղի արտաքին զննում եւ առաձգական կցորդիչների կամ կարդանային հողակապերի տեխնիկական վիճակի ստուգում:</p>	<p>բ) նկատվում է ղեկասյան սոնու առանցքի նկատմամբ ղեկասյան վերին հատվածի թույլատրելից ավելի տեղաշարժ. գ) առաձգական կցորդիչը տեխնիկապես վատթարագույն վիճակում է. դ) հենատուփը վնասված է. ե) ոչ պատշաճ վերանորոգում կամ ձեւափոխություն:</p>
<p>2.3. Ղեկային խաղ</p>	<p>Երբ փոխադրամիջոցը գտնվում է տեխնիկական զննման փուսի կամ ամբարձիչի վրա, փոխադրամիջոցն ամբողջ զանգվածով ընթացանիվների վրա է, ուժեղարարով ղեկային կառավարման համակարգով փոխադրամիջոցների դեպքում շարժիչը գործադրված է եւ ընթացանիվները գտնվում են ուղիղ դիրքում, անհրաժեշտ է թեթեւակի պտտել ղեկանիվը ժամացույցի սլաքի ուղղությամբ եւ հակառակը՝ հնարավորինս չտեղաշարժելով ընթացանիվները: Ազատ տեղաշարժի արտաքին զննում:</p>	<p>Առկա է թույլատրելից ավելի ղեկային ազատ խաղ (օրինակ՝ անվահեծի հատվածի՝ ղեկանիվի տրամագծի մեկ հինգերորդը գերազանցող տեղաշարժ կամ խաղը չի համապատասխանում սահմանված պահանջներին)</p>
<p>2.4. Անիվների տեղադրման անկյունների (զուգամիտում)</p>	<p>Անհրաժեշտ է ստուգել ղեկանիվների տեղադրման</p>	<p>Կարգավորումը չի համապատասխանում</p>

կարգավորում (X)	անկյունների կարգավորումը համապատասխան սարքավորմամբ	արտադրողի կողմից ներկայացված տվյալներին կամ պահանջներին
2.5. Կցասայլն ուղղորդող կցորդիչի հենասարք	Արտաքին զննում կամ ստուգում՝ հատուկ հարմարեցված անիվի խաղի չափման դետեկտորի կիրառմամբ:	ա) հաղորդակը ճաքած է կամ վնասված. բ) բացակների անթույլատրելի ավելացում. գ) հարմարանքը վնասված է:
2.6. Էլեկտրոնային կառավարմամբ ուժեղարարով դեկ (EPS)	Արտաքին զննում, ղեկանիվի անկյան եւ անիվների անկյան միջեւ համապատասխանության ստուգում, երբ շարժիչն անջատվում եւ գործադրվում է:	ա) ուղեգծային կայունության վերահսկման էլեկտրոնային համակարգի անսարքության լամպը հաղորդում է համակարգի աշխատանքային որեւէ խափանման մասին. բ) ղեկանիվի անկյան եւ անիվների անկյան միջեւ առկա է անհամապատասխանություն. գ) արգելակային ճիգի փոխանցումը չի իրականացվում:
3. ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ		
3.1. Տեսադաշտ	Արտաքին զննում վարորդական նստատեղից	Առկա է վարորդի տեսադաշտի սահմանափակում, որն էականորեն ազդում է տեսանելիության վրա՝ դիմային կամ կողային հատվածներում
3.2. Ապակիների տեխնիկական վիճակը	Արտաքին զննում	ա) ապակին ճաքած է կամ գունազրկված, կամ առկա է թափանցիկ երեսվածք

		<p>(թույլատրման դեպքում).</p> <p>բ) ապակին կամ թափանցիկ երեսվածքը (ներառյալ հայելային կամ մգեցման թաղանթները) չեն համապատասխանում պահանջներով սահմանված մասնագրերին. (XX)</p> <p>գ) ապակին կամ թափանցիկ երեսվածքը տեխնիկապես անթույլատրելի վիճակում են:</p>
3.3. Հետին տեսանելիության հայելիներ կամ սարքեր	Արտաքին զննում	<p>ա) հայելին կամ սարքը բացակայում են կամ տեխնիկապես չեն համապատասխանում սահմանված պահանջներին.</p> <p>բ) հայելին կամ սարքը տեխնիկապես անսարք են, վնասված են, թուլացած կամ հուսալի չեն:</p>
